

ՍԱՐԴԱՐԱԲԱԴ

SARDARABAD

BUENOS AIRES
AÑO XIV
N° 536
Miércoles
9 de
Agosto
de
1989

FIEL EXPRESION DEL PENSAR DEMOCRATA LIBERAL DE LAS COLECTIVIDADES ARMENIAS DE SUDAMERICA
PRIMER PERIODICO ARMENIO DE SUDAMERICA IMPRESO EN SISTEMA OFFSET

Se concreta la ayuda de la colectividad al pueblo de Armenia

En la visita efectuada a Buenos Aires por la delegación especial del gobierno de Armenia, presidida por el Viceprimer Ministro señor Vanik Daian, se llegó a un acuerdo de ayuda entre los representantes de las entidades de nuestra Diáspora y dichos representantes del pueblo armenio. A ese efecto, el 3 de julio pasado se firmó el siguiente protocolo:

Buenos Aires,
3 de julio de 1989

El 29 de junio de 1989 se llevaron a cabo tratativas entre la delegación oficial de la R. S. S. de Armenia y la Comisión Coordinadora de ayuda a los damnificados por el terremoto.

El objetivo de dichas tratativas era adoptar una resolución que fijase los objetivos a los que sería destinada la suma recaudada por la comunidad armenia de la República Argentina, en concepto de ayuda para la reconstrucción de las regiones devastadas por el sismo.

Participaron en las tratativas tres personas por la delegación proveniente de Armenia; la Comisión Coordinadora de ayuda a los damnificados por el terremoto, de la comunidad armenia de la República Argentina; y la Subcomisión de Finanzas de la citada Comisión.

Analizando las cuestiones relacionadas con la ayuda a las regiones afectadas por el terremoto, las partes llegaron a las siguientes conclusiones:

1.- La Comisión Coordinadora se responsabiliza de adquirir y donar a Armenia una línea de corte de carne de tecnología moderna para la renovación del frigorífico de Leninakán.

2.- Un laboratorio móvil para la inseminación artificial de ganado bovino.

3.- Reactores químicos e instalaciones de laboratorio para la inseminación artificial de ganadería bovina. Ver lista adjunta.

4.- FSK-400 dosis de hormonas.

5.- 200 embriones de vacas lecheras Holstein y Shwitz

Para el traslado de los bienes hasta la frontera soviética, colaborarán los representantes de la U.R.S.S. en la Argentina. El monto total de la suma destinada asciende a 1.200.000 dólares.

La Comisión Coordinadora, de acuerdo a su espíritu humanitario, y con la bendición del Catolicós Vazkén I, toma a su cargo continuar con la recaudación de fondos para la concreción de trabajos de ayuda a largo plazo y, de ser posible, para la confección conjunta de nuevos proyectos de ayuda, como por ejemplo, la maternidad modelo que había sido propuesta anteriormente.

Este protocolo entra en vigencia a partir de la firma de las partes.

Firmado: DELEGACION DE ARMENIA: Vanik Daian, Viceprimer Ministro; Romén Kosmoian, Vicepresidente del Comité de Relaciones Culturales con la Diáspora; Kevork Josrovian, consejero gubernamental.

COMISION COORDINADORA: Mons. Krikoris Pouniatian, Primado de la Iglesia Armenia en la Argentina; Dr. Antranik Arslanian y Zakar Anmahuní, Comisión Directiva de la Institución Administrativa de la Iglesia Armenia; Samo Sarkissian, P. S.D. Hnchakian; Avedik Izmirlian, F.R.A. Tashnagtsutiún; Vartan Shahinian, O.D. L. Ramgavar; Hagop Minassian, Unión General Armenia de Beneficencia; Rita Adjemian, Sociedad de Beneficencia para América del Sur - H.O.M..

SUBCOMISION DE FINANZAS: Haig Emirian, Kevork Karagueozian, Krikor Tertzaguian, Neshan Chamichian y Manuk Terzian.

La piedra fundamental de nuestro edificio

El domingo 20 del corriente, a las 12.30 horas, procederemos a colocar la piedra fundamental de la nueva y moderna construcción del Complejo Cultural y Social *Surén Fesdjian*, de la Asociación Cultural Tekeyan, y de los talleres de imprenta de *Sardarabad*.

El acto tendrá lugar en el terreno donde estuvo nuestra casa de la calle Armenia 1319, e invitamos a compartir este acontecimiento a todos nuestros connacionales.

Monseñor Boghossian Primer Obispo armenio católico de Buenos Aires



El 15 de julio pasado fue dada a conocer la designación de Monseñor Vartan W. Boghossian como primer Obispo de los armenios católicos, simultáneamente con el establecimiento de la Eparquía "San Gregorio de Narek", para los armenios católicos de Buenos Aires, elevando así a esta dignidad al Exarcado Apostólico Armenio en la Argentina.

Estas resoluciones, adoptadas por el Papa Juan Pablo II, fueron comunicadas a los fieles de la Argentina por el legado de la Congregación para las Iglesias Orientales, de la Santa Sede, Monseñor Claudio Gugerotti, quien con ese propósito llegó a la Argentina el viernes 14 de julio.

En las Misas del sábado 15 y domingo 16, Monseñor Gugerotti se dirigió a la feligresía informándole sobre estas designaciones del Santo Padre, invitando al pueblo armenio a comprender que este acto constituye un llamado a ejercitar una más activa participación de los fieles acrecentando la fe y las obras en la pastoral de la Iglesia que es suya y, también, para que se eleve cada vez más a Dios Padre la alabanza de los pueblos, por el testimonio del pueblo armenio orgullo y honor de la Iglesia universal. Esta Eparquía ha sido reconocida por el gobierno argentino mediante decreto 948 M 131 del 29 de junio.

Por su parte, el Catholicós Patriarca Hovannés Bedrós XVIII envió un télex a Monseñor Moghossian, expresándole su doble alegría por la creación de la Eparquía y por la designación de Monseñor Boghossian como su primer Obispo "testimonio elocuente del amor del Santo Padre hacia nuestra Iglesia".

Monseñor Boghossian conserva su condición de Exarca para las comunidades de Uruguay y Brasil.

Gorbachov bautizado?

Durante su reciente visita a París, el líder soviético Mikhail Gorbachov repitió lo que ya había manifestado en otra oportunidad: **que él, de niño, había sido bautizado por su madre cristiana.**

El cronista que registra este hecho manifiesta que no deja de ser sorprendente el hecho de que el jefe máximo de un estado ateo pertenezca, por el sello indeleble del bautismo, a la comunidad cristiana. Y, además, que ese jefe de Estado sea, el promotor de reformas destinadas a restituirle a su pueblo algunas de las libertades de que ha carecido durante más de setenta años -incluida la de profesar su fe religiosa-.



Los biógrafos de Gorbachov no mencionan el dato del bautismo, siendo él mismo quien lo ha revelado, aunque no expresó cuál fue la iglesia en la que recibió este sacramento.

Celebración del día de la Madre

Organizado por las Damas de la Iglesia San Gregorio El Iluminador, con la colaboración de las Damas de la colectividad argentino-armenia, tendrá lugar el domingo 13 de agosto, a las 13 horas, en el Salón Centro Armenio, un acto artístico de recepción y agasajo a las madres armenias.

Este acto cuenta con el auspicio del Primado de la Iglesia Apostólica Armenia, Monseñor Krikoris Pouniatian.

Varoujan Kevorkian
Su fallecimiento

El 26 del corriente se produjo en esta ciudad el fallecimiento del señor Varoujan Kevorkian, hombre estrechamente vinculado a la colectividad de esta diáspora, a cuyo desarrollo y florecimiento contribuyó grandemente.

El señor Kevorkian estaba vinculado con numerosas familias armenias, siendo su esposa la señora Arminé y sus hijos Silvia, Jazmín y Rubén.

El aprecio que el señor Kevorkian había conquistado en la comunidad, se puso de manifiesto en la Misa de cuerpo presente que tuvo lugar el jueves 27, a las 10, en la Catedral de San Gregorio El Iluminador y, posteriormente, en el acompañamiento de sus restos hasta su descanso en el cementerio de Villegas.

Falleció la pintora María Merdirossian

El 3 de julio pasado se produjo en la ciudad de Mar del Plata el fallecimiento de la conocida pintora señora María Merdirossian, madre del famoso pianista Mario Merdirossian, de cuya SARDARABAD **en diversas oportunidades.**

El fallecimiento de la señora Merdirossian -Directora Cultural del Centro de Residentes Armenios de Mar del Plata- ha sido muy lamentado en el seno de la colectividad, y los muchos afectos *por ella* logrados se pusieron de manifiesto en la numerosa presencia de parientes y amigos que acompañaron sus restos hasta el Cementerio Británico de Buenos Aires, donde recibieron sepultura.

Homenaje a Iskuhí Kullahian de Festekdjian

El día 8 de julio ppdo., a las 15 horas, la Comisión Directiva de la U.G.A.B., junto a familiares, visitó la tumba de la Sra. Festekdjian, en el Cementerio Armenio, para honrar su memoria con motivo de cumplirse los cuarenta días de su fallecimiento.

El domingo 9 de julio, en horas de la mañana, hizo rezar un responso por el eterno descanso de su alma en la Iglesia Catedral San Gregorio El Iluminador, luego de concluído el oficio dominical. Posteriormente se procedió a imponer el nombre de Iskuhí Festekdjian a la sala de reuniones de la Comisión de Damas de la U.G.A.B. de la que fuera una de sus fundadoras. La ceremonia se cumplió en el Centro Cultural Alex Manoogian, Armenia 1322, y en la misma hizo uso de la palabra la Sra. Alicia Horigian de Kuchikian, presidenta de dicha Comisión.

Luego fue servido un almuerzo (hokedjash) in memoriam, en el transcurso del cual usó de la palabra el Sr. Hovsep Youssefian, miembro del Consejo Central de la U.G.A.B., quien destacó las dotes de la extinta como persona de bien, con una vida fértil y pródiga en favor de Parecordzagan, retribuyendo así lo que esa benemérita institución le brindó en su orfandad.

Dijo, además, que: nacida en la heroica ciudad de Hetesia (Urfá), dedicó sus esfuerzos al resplandecimiento del Instituto Marie Manoogian, al cual brindó su apoyo moral y material.

Durante el almuerzo se efectuaron numerosas donaciones, las cuales engrosaron los tres mil dólares que la Sra. Festekdjian legó a su querida Parecordzagán, instituyéndose así el Fondo Educacional Iskuhí Festekdjian de la U.G.A.B.. Debemos destacar, además, que la Sra. Festekdjian legó todas sus pertenencias a la U.G.A.B..

Así culminó una tarde llena de emociones y vivencias, en la cual U.G.A.B. brindó su reconocimiento y honor a quien fuera una gran colaboradora.

Actividades infantiles en Marash

Desde hace un tiempo, la Subcomisión Juvenil de la Unión Compatriótica Armenia de Marash viene organizando, los sábados por la tarde, actividades artísticas que comprenden dibujo, pintura, danzas, cerámica, música, deportivas (fútbol de salón) y excursiones por la ciudad de Buenos Aires, destinadas a niños de nuestra comunidad, actividad que se cumple en forma totalmente gratuita para los interesados.

Alrededor de más de medio centenar de pequeños son atendidos con dedicación y cariño por integrantes femeninos de dicha subcomisión, lo que facilita la manifestación de la capacidad artística y deportiva de los pequeños. En cada actividad sabatina se hace un descanso, en el cual los niños disfrutan de un reparador lunch o de una rica chocolatada.

Se encuentra enfermo el Padre Mushian

Enfermo de cuidado, el R. P. Harutiun Dzairakuin Vartabed Mushian ha sido internado en la sala de terapia intensiva del Hospital de Clínicas, donde está siendo atendido con especial solicitud.

SARDARABAD formula fervientes votos para que el Padre Mushian supere este trance, y que pronto lo veamos nuevamente reintegrado a su dinámica actividad pastoral.

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL
TEKEYAN

Redacción y Administración
Cnel. Niceto Vega 4779
1414 - CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: *Lun. a Vier. de 10.00 a 19.00 hs.*

Registro Nac. de la Propiedad Intelectual
Nº 78.636
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía, recepción de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 - San Pablo
T.E.: 813-6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T

Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա.ի Կոնդակը Մայիս 28-ի եւ Եռագոյնի պաշտօնական ճանաչումին մասին

Թէպէտ որոշ յապաղումով, բայց եւ այնպէս հրամայական նկատելով տրուած քայլով պատգամին այժմէականութիւնը, կը հրատարակենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոցի պաշտօնական կոնդակը, լոյս տեսած Յունիս 14, 1989ին -զոր հրատարակեց տեղական հայ մամուլը - Մայիս 28ի, Եռագոյնի Պետական Ճանաչման, ինչպէս նաեւ Նոյեմբեր 29ին մասին: Վեհափառին կոնդակը դրական առողջ մօտեցումով կը բացատրէ իւրաքանչիւր տուեալի կամ Թուականի պատմական ճշգրիտ դերը հայ իրականութեան համար: (ԽՄԲ.)

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Նախախնամութեան տնօրինութեամբ եւ ժամանակների բարեշրջումը հասաւ սպասուած ժամը, որ մեր ժողովուրդն ու Պետութիւնը իւրացնեն վերջին հարիւր տարիների իրենց պատմութիւնը, որ մի հերոսական դիւցազներգութիւն է ազատագրական պայքարի «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

Ժողովուրդները իրենց պատմութիւնը իւրացնելով է, որ կարողանում են իրենց ազգային ինքնութիւնը հաստատել ու գտնել ուղիղ ճանապարհ դէպի ապագան:

Ահա թէ ինչու Մենք, յանուն Հայ Առաքելական Եկեղեցու, ողջունում ենք մեր Հայրենի Պետութեան այս տարուան Մայիսի 26ի որոշումը, որ 1918 թուի Մայիսի 28ի օրը պաշտօնապէս ճանաչում է որպէս նոր ժամանակների Հայ Պետականութեան հռչակման տարեթիւ, Հայկական վերջին -Կիլիկեան- թագաւորութեան անկումից վեց հարիւր տարիներ յետոյ:

Հայոց նոր Պետութեան հռչակումը արգասիքն է Հայ Ազգի գաւառների դարաւոր երազանքների, արգասիքն է նրանց ազատագրական մաքառումների, արգասիքն է Սարդարապատի Մայիսեան յաղթանակի: Եթէ Սարդարապատում Հայերը յաղթանակած չլինէին, Թիֆլիսում 1918 Մայիս 28ին Հայաստանի անկախութեան հռչակման փաստաթուղթը պիտի մնար մեռեալ տառ:

Հայ ժողովուրդը իր ազգային Անկախ Պետութիւնը հիմնեց 1918ի «իւր քաջ որդւոց սուրբ արիւնով», Պետութիւն, որի խորհրդանիշը հանդիսացաւ Ազգային նոր Դրօշը Եռագոյն: Սարդարապատի յաղթանակով եւ 1918ի Հայ Պետականութեան հռչակումով սկիզբ առաւ Հայաստանի նորագոյն պատմութիւնը:

Այսօր էլ մեր ժողովուրդը կանգնած է նոյն այդ Պատմութեան հիմքերի վրայ, որովհետեւ Հայ Պետութիւնը իր գոյատեւումը շարունակեց Խորհրդային Կարգերի հաստատումով 1920 թուի Նոյեմբերի 29ին, երբ դաւաճան թշնամին սպառնում էր քնաջինջ անել նաեւ նորաստեղծ Հայաստանը 1915ի Ցեղասպանութեան օրինակով:

Այսպիսով է, որ Հայաստանի Հանրապետութիւնը շարունակեց իր գոյատեւումը Խորհրդային Ազգութիւնների Հանրապետութեան Միութեան մէջ, այս վտանգութեան ու խաղաղ զարգացման պայմաններում, մեր օրերին հետզհետէ առաւել ինքնիշխան դառնալու ճանապարհի վրայ: Սա նոյնպէս մեր պատմութիւնն է որ պէտք է իւրացնենք ու արժեւորենք իրատեսութեամբ ու արդարութեամբ:

Կանգնած պատմական զարգացման այս հանգրուանին, Հայաստանի ժողովուրդը պէտք է իր հայեացքը սեւեռի դէպի իր ապագան, Ազգային ինքնաճանաչումի եւ արժանապատուութեան զգացումով, ժողովրդի ու Հայրենի Պետութեան միասնութեան ոգիով եւ մեր ազգի գերագոյն շահերի գիտակցութեամբ, երբեք, երբեք մոռացութեան չտալով մեր Հայրենիքի աշխարհագրական դիրքը, մեր անցեալի ողբերգական փորձառութիւնը եւ մեր ժողովրդի սեփական ուժերի իրական տարողութիւնը, տրւեալներ, որոնք պայմանաւորում են մանաւանդ փոքր Ազգերի քաղաքական կողմնորոշումն ու ճակատագիրը:

Սոյն մեր Կոնդակով հրահանգում ենք բոլոր մեր Եկեղեցիներին ի Հայաստան եւ ի Սփիւռքս աշխարհի, որ ինչպէս ամէն տարի Նոյեմբերի 29ին, յետ այսու նաեւ Մայիսի 28ին Գոհաբանական Մաղթանքներ կատարուեն:

Օրհնութիւն Սարդարապատի Հերոսների եւ Մայիսի 28ը կերտողների յիշատակին:

Փառք վերածնուած մեր Մայր Հայաստանին:



ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 Յունիսի 1989 Փրկչական ամի,
եւ ի տոմարիս Հայոց ՌՆԼԸ
ի ՄԱՅՐԱՎԱՆՍ Սրբոյ Էջմիածնի:
Համր. 1626

Թեմիս Սրբազան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգորիս Եպս. Բունիաթեանի արտասանած քարոզը, Կիրակի 30 Յուլիսին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յետ՝ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի կոնդակին ընթերցումին, Մայիս 28ի, եւ եռագոյնի մասին:

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԲԱՐԵԾՐՋՈՒՄՈՎ ՀԱՍԱՒ ՍՊԱՍՈՒԱԾ ԺԱՄԸ, ՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸՆ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՒՐԱՑՆԵՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԵՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՄԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ Է ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԷՆ

Ինչ ուրախութիւն, ինչպիսի՛ հրճուանք, որովհետեւ հայ իրականութեան մէջ տարիներով վէճի եւ պառակտումի տեղիք տուած հարց մը կը հանգի իր վերջնական դրական լուծումին: Այս կերպ կը տեսնենք նաեւ, թէ հայ քաղաքական եւ ընկերային կեանքի վերաբերեալ լուրերը միշտ գոյժեր չեն, այլ նաեւ, հաճախ, աւետիքներ եւ յաջողութեան հաղթանակներ:

Այս անգամին, Մայիս 26–ին, Մայր Հայրենիքի իսկ սիրտէն՝ անոր խորհրդարանէն, հնչեց ձայնը արդարութեան եւ բարի լուրը ճերմակ աղաւնիի թեւերուն տարաւ համայն հայութեան, հայրենիքի մէջ եւ աշխարհի չորս ծագերուն:

Հռչակուեցան իրենց պատմական նշանակութեամբ 1918–20 Թուականներու Հայաստանի անկախ Հանրապետութեան երկուք ու կէս տարուան իրողական գոյութիւնը՝ Մայիս 28–ի խորհուրդով, եւ եռագոյն դրօշը:

Հաղթանակեց ճշմարտութիւնը, վերահաստատուեց արդարութիւնը:

Ու այսօր, այս իրադարձութեան բեւեռումով, ներշնչուած քրիստոնեական մտածողութեան իմաստնութեամբ եւ հայոց պատմութեան խորհուրդով, ընթերցուեց այստեղ հայրապետական Սրբատառ Կոնդակը իբրեւ ձայնը լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հնչելով որպէս պատգամ եւ բերելով նոր ժամանակներու մարգարէաշունչ ոգին ու թարմութիւնը:

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի, ինչպէս միշտ մարգարտաշար, առանց աւելորդաբանութեան ճշգրիտ մտքեր խտացնող, խօսուն այս Կոնդակի ընթերցումէն վերջ ինչ կրնանք աւելցնել մեր տկար խօսքով: Հաւանաբար ոչինչ:

Որովհետեւ սա կայ, միտքը Աստուծոյ կողմէն՝ մարդուն տրուած ամենամեծ շնորհն է եւ միեւնոյն ժամանակ հզօր զէնք մը ըմբռնելու, բացատրելու ու ծրագրելու գոյութեան իմաստը եւ կեանքը, աւելորդ չէ ամէն առիթով, մանաւանդ սփիւռքահայ կեանքի լոյսին տակ կատարել որոշ խորհրդածութիւններ:

Վերը ակնարկեցինք ճշմարտութիւն եւ արդարութիւն գաղափարներուն:

Քրիստոնեական վարդապետութեան հիմնական առանցքը կը կազմեն այս երկու իմաստները: Ճշմարտութեամբ եւ արդարութեամբ կը լուծուին մարդկային եւ ընկերային ամեն խնդիր: Անգամ ամէնէն դժուար թըւացածները: Կեանքի մէջ կը թագաւորէ աստուածահաճոյ ներդաշնակութիւնը ու ամէն ինչ իր բնական եւ տրամաբանական վիճակին կը վերածուի:

Ընկերային հակասութիւնները, բարդութիւնները, աններդաշնակութիւնը կը տիրապետեն հոն, ուր բացակայ են ճշմարտութիւնն ու արդարութիւնը:

Դժբախտաբար շատ մը հարցերու վերաբերեալ այդպիսին էր իրողութիւնը հայ ժողովուրդի կեանքին պարագային եւ տակաւին ալ կը շարունակուի անոնցմէ ոմանց համար նոյնը մնալ:

Հայոց պատմութիւնը առաւելաբար տառապանքի պատմութիւն է: Մասնաւորաբար 20–րդ դարու ընթացքին: Իրականութիւն մը՝ հակասութիւններով լեցուն, հաճախ, դրեթէ անըմբռնելի: Ու այդ բոլորը՝ որովհետեւ ժողովուրդ մը, ճակատագրի ծաղրով եւ դըժբախտ իրադարձութիւններու ու պայմաններու չարայարութեամբ գրկուած էր իր ճակատագիրը ի՛նք տնօրինելու իրաւունքէն: Ակամայ միջազգային քաղաքական տարերքին յանձնուած, առարկան դարձած էր աշխարհի մէջ երեւակայելի եւ աներեւակայելի ամէն տեսակ քմահաճոյքի: Կամայականութիւն, գրկանք, ժխտում, հարստահարում, հալածանք, ոտնահարում, նուաստացում եւ տակաւին կարելի է երկարել շղթան ըմպած տառապանքի փաւթին: Ողբերգութեան խորութիւնը տակաւին հոն է, որ հայը ոչ միայն անհատապէս ու հաւաքաբար առարկան էր անոնց, այլ երբեմն ալ անգիտակցաբար մասնակիցն ու դերակատարը:

ԾԱՐ.Ը 4-ՐԴ ԷՋ

Սրբազան Առաջնորդին Քարոզը

ՇԱՐ. 8-ՐԴ ԷՋԷՆ

Պահ մը միայն փորձենք մտաբերել եւ դիտակցութեան լոյսի տակ առնել այն չարիքները, որոնց մէջ գործիք դարձած է հայը ինք։

Հաճախ այս իրողութեան առջեւ ձեռքերը կապուած, անօգնական հայուն ուրիշ ոչինչ կը մնար, եթէ ոչ կրծքի տաղ խեղդել զայրոյթը, հոգ չէ ինքնաքանդումի իսկ ի գին եւ ատամները կրճտել։

Բռնութիւնը, անարդարութիւնը, կեղծիքն ու սուտը դարձած էին սխուր այս երկրին անբաժան ընկերակիցները։

1915-ի արհաւիրքէն վերջ միջազգային քաղաքական թատերաբեմին վրայ տեղի ունեցած փոփոխութիւնները իրենց ազդեցութիւնը եւ հետեւանքները դրոյժիցին նաեւ հայութեան կեանքի վրայ։

Մանօթ հանգամանքներու մէջ, 1918 թուականին երկար դարեր քաղաքական անկախութիւնը կորցրած հայը իր պատմական հողատարածութեան մէկ մաս

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ - ԿՈՉ

Գաղութիս եկեղեցական կեանքին շուրջ ստեղծուած անհամութիւններուն եւ տգեղ մթնոլոր-
տին համար կը ցաւիմ եւ կոչ կ'ընեմ մեր ժողովուրդին սրտցաւութեանը եւ լայնախոհութեանը:
Հարցը վէրք մըն է, որ պէտք է բուժուի: Այդ իսկ պատճառաւ երկար կշռադատելէ վերջ եկայ
այն եզրակացութեան, որ տեղեկացումները եւ լուսաբանութիւնները անհրաժեշտ են ժողովուր-
դին եւ հաւատացեալներուն համար, որովհետեւ անոնք ունին այդ իրաւունքը: Կ'ուզեմ բոլորին
յստակ ըլլայ, թէ եկեղեցւոյ շուրջ այս կացութիւնը գաղութային եւ քաղաքական հարց մը չէ,
այլ զուտ եկեղեցական, եւ իբրեւ պայքար, կը կրէ անձնական բնոյթ վարչութեան խմբակի մը
եւ առաջնորդին միջեւ: Մանրամասնութիւններ շատ կան, սակայն տարաձայնութեան բուն նիւ-
թը այն է, որ Հայց. Առաք. Եկեղեցւոյ կանոնագրային ոգու համաձայն առաջնորդին պատկա-
նող իշխանութիւնը յիշեալ խմբակը կը փորձէ իւրացնել եւ իր կամքը պարտադրել եկեղեցւոյ
մէջ:

Իմ դժգոհութիւնը եւ հակառակութիւնը ոչ որեւէ կուսակցութեան եւ ոչ ալ վարչական ամ-
բողջ կազմին յանդէպ է: Առաւել եւս վարչութեան Մեծայարգ Ատենապետի որ ազնուական
անձնաւորութիւն մըն է, շատ վեր է այս խնդիրներէն եւ ոչ մէկ բաժին ունի այս խնդիրներուն
մէջ:

Տիրող իրավիճակը այն է, որ թեմը ունի խնդրական կանոնագրութիւն մը, որը արդէն հա-
մապատասխան չէ եկեղեցական օրէնքներուն, երբէք չէ վաւերացուած Մայր Աթոռի կողմէն,
հետեւաբար պաշտօնապէս չէ ճանչցուած, եւ այդ թերի կանոնագրութիւնը անգամ չի յարգուիր
հոս եւ ծայլուած մէկ կողմ դրուած է: Անոր փոխարէն օրէնքի ուժ դարձած է այդ խմբակին
կամքը: Անդամական Ընդհանուր Ժողով հասկացութիւնը ամբողջովին մոռցուած եւ դարձած է
ձեւական բեմադրութիւն մը: Ոչ թէ ընտրութիւններ տեղի կ'ունենան, այլ կը կատարուին նշա-
նակումներ:

Փոխ-Ատենապետը բռնապետ մը դարձած, քովը ունենալով իր համախոհներուն խմբակը ի-
րենց խանութին վերածած են Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին եւ անոր հովանիին
տակ գործող հաստատութիւնը: Իրենց անձնական քմահաճոյքը եւ հատուածական շահը միայն
նպատակ ըրած կը գործեն ամեն տեսակ անարդար եւ կամայական միջոցներով: Վարչական
ժողովներուն մէջ առնուած որոշումները կը նմանին Հռոմէական կայսրութեան շրջանի գլա-
դիատորներու մարտերուն, երբ կայսրը իր բութ մատով կը տնօրինէր ասոր կամ անոր ճակա-
տագիրը: Հարցերը ժողովին կը բերուին արդեն քանի մը հոգիներու մէջ որոշումը ընդունելէ
վերջ: Եթէ պատահի, որ նոր ծրագիր մը կամ հարց մը առաջարկուի, առաջին հակազդեցու-
թիւնը կ'ըլլայ, որ բոլոր ժողովականները բացի պզտիկ փոքրամասնութենէ մը նախ կը լռջա-
նան, երեսներուն վրայ վախի մը արտայայտութիւնը կը գծագրուի, ապա մէկ մարդու պէս ա-
մենքը կը նայեն Փոխ-Ատենապետին: Այլեւս այդ հարցին ճակատագիրը կախուած է անոր ե-
րեսին գոյնէն, հայեացքէն, քիթին տակ մռմռալէն, քովը նստող Ատենապետին բան մը փըս-
փսալէն, սուլոց մը հանելէն, երգ մը մրլտալէն, մատներու ծայրով սեղանին թըքթըքացնելէն,
ականջին ծայրը քորելէն եւ ասոնց նման հազար ու մի շարժումներէ, որ դիմացինները, 20
տարի ժամանակ ունեցած են լաւ մը սերտելու, թէ ինչ կը նշանակէ ու կը փորձեն որոշումը
անոր հիման վրայ առնել:

*Նման իրողութիւնը անթոյլատրելի ոտնձգութիւն է Հայց. Առաք. Եկեղեցւոյ ոգիին եւ կանոն-
ներուն դէմ:*

Կոչ կ'ընեմ գաղութիս բոլոր բարի կամքի տէր մարդոց եւ կազմակերպութիւններուն, ժամա-
նակը հասած նկատել սրտցաւութիւն եւ հետաքրքրութիւն ցուցաբերելու եկեղեցին յուզող հար-
ցերու յանդէպ եւ հաւաքաբար ջանալ դարմանելու ստեղծուած տխուր կացութիւնը:

Սոյն հաղորդագրութեան հետ հրատարակութեան կը յանձնեմ վարչութեան ինծի ուղղած
նամակը, որ ապօրինութեան նմոյշ մըն է, եւ իմ պատասխան նամակը անոր:

Կը յայտնեմ նաեւ, թէ Վեհափառ Հօր կարգադրութեամբ իմ պաշտօնավարութիւնը հոս
միայն կը լրանայ 1990 թ. Սեպտեմբեր ամսուն:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՒՈՅ
ՑԱՐԳԱՐԺԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Մեծայարգ տիարք,

Ընթերցելէ վերջ 27 Յուլիս 1989 թուակիր Ձեր գրութիւնը՝ ստորագրուած վարչութեան Փոխ-Ատենապետ տիար Անդրանիկ Արսլանեանի եւ Ատենադպիր տիար Զաքար Անմահունիի կողմանէ, կը յայտնեմ հետեւեալը:

Ա. Ձեր նկատումին կը յանձնեմ, թէ թուղթը, որ Սենթրօ Արմենիօ տիտղոսագրուած է իրաւաբանական սխալ մը երեւան կը հանէ: Սենթրօ Արմենիօ անունով պաշտօնական կազմակերպութիւն մը գաղութիս մէջ գոյութիւն չունի, ինչպէս որ կը փաստէ արդէն ստորագրուած՝ Հ. Ա. Ե. Կեդրոնական Վարչութիւն պաշտօնական անուանումը: Իսկ ըլլալու պարագային ալ նման անուն կրող կազմակերպութիւն մը իրաւասութիւն չի կրնար ունենալ զբաղելու եկեղեցական գործերով:

Բ. Համաձայն Հայց. Առաք. Եկեղեցւոյ կանոններուն վարչութիւն մը իրաւասու եւ զօրու չէ իր որոշումով Առաջնորդ նշանակել կամ պաշտօնէ դադրեցնել: Նոյնիսկ՝ առանձին նըման հարցով չի կրնար զբաղիլ: Արդեն Արգենտինահայ թեմի կանոնագրութիւնը նման յօդուած չի պարունակեր:

Հետեւաբար Ձեր սոյն գրութիւնը եւ որոշումը իրաւաբանական ոչ մէկ ուժ կը պարունակեն, այլ ընդհակառակը եւս մէկ անգամ կը վկայեն օրէնքի կոպիտ խախտումի մասին:

Գ. Ըստ Հայ Եկեղ. կանոնագրութեան, առաջնորդէն դըժգոհութեան պարագային վարչութեան մը իրաւասութիւնը միայն դժգոհութիւնը Անդամական Ընդհ. Ժողովին տանելն է, ապա ժողովի որոշմէն վերջ այն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցելը, որմէ վերջ խնդիրը կը մնայ Մայր Աթոռի կարգադրութեանը, որը հաւատացեալներու եւ բոլոր կողմերու տեսակէտները եւ խնդիրը ըստ էութեան ուսումնասիրելէ վերջ կը կատարէ համապատասխան տնօրինութիւնը:

Դ. Վարչութիւնը նման գրութիւն մը Առաջնորդին ներկայացնելու իրաւունք չունի ու այն կը նկատուի ոտնձգութիւն եկեղեցական կանոններուն դէմ: Կանոնականօրէն ինծի կը մնար Ձեր գրութիւնը թողնել անպատասխան: Միայն, Ձեր անտեղեակութիւնը Հայց. Եկեղեցւոյ կանոններուն մասին ի նկատի առնելով է, որ սոյն բացատրութիւնը Ձեզի կը փոխանցեմ:

Ե. Քանի որ յիշեալ գրութենէն կը տեղեկանամ նաեւ, թէ համապատասխան դիմում կատարած էք Վեհափառ Հայրապետին, ուրեմն կսպասեմ Նորին Սրբութեան վերջնական կարգադրութեանը:

Մինչ այդ, համաձայն Վեհափառ Հայրապետի Վարչութեանդ ուղղած գրութեան, որով իմ պաշտօնավարութիւնը կ'երկարաձգէ մինչեւ 1990 թ. Սեպտեմբեր ամիսը, կը շարունակեմ իմ պաշտօնը սովորականի պէս:

Յարգանօք,

ԱՂՕԹԱՐԱՐ՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅՈՑ

Centro Armenio Armenia 1353
1414 Buenos Aires - Argentina
Tel. 772-3558

27 Յուլիս 1989
Պ. Այրէս

ԳԵՐՇ. ՏԷՐ՝
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍԿ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ

Սրբազան Հայր՝

Հ.Ա.Ե. Կեդրոնական Վարչութիւնս այսու կու գայ յայտնելու՝ որ Ձերդ Սրբազնութեան Թեմիս Առաջնորդութեան պաշտօնավարութեան ժամանակաշրջանը վերջ կը գտնէ ընթացիկ տարուայ 1989-ի Սեպտեմբերի աւարտին:

Յայտնենք նաեւ որ այս որոշումը իր հիմնաւորումներով վարչական ժողովներուն մէջ հանգամանօրէն քննելէ ետք, միաձայնութեամբ փոխանցած ենք Վեհափառ Հայրապետին:

Մատչելով համբոյր Ձեր Սրբ. Աջոյն՝

Ի դիմաց
Հ.Ա.Ե. Կեդրոնական Վարչութեան

Փոխ-Ա.պետ — Ա.Արսլանեան
Ատենադպիր — Զ.Անմահունի

---

27 Յուլիս 1989, Պ. Այրէս

ԳԵՐՇ. ՏԷՐ՝
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍԿ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ

Սրբազան Հայր՝

Հ.Ա.Ե. Կեդրոնական Վարչութիւնս այսու կու գայ յայտնելու՝ որ Ձերդ Սրբազնութեան Թեմիս Առաջնորդութեան պաշտօնավարութեան ժամանակաշրջանը վերջ կը գտնէ ընթացիկ տարուայ 1989-ի Սեպտեմբերի աւարտին:

Յայտնենք նաեւ որ այս որոշումը իր հիմնաւորումներով վարչական ժողովներուն մէջ հանգամանօրէն քննելէ ետք, միաձայնութեամբ փոխանցած ենք Վեհափառ Հայրապետին:

Մատչելով համբոյր Ձեր Սրբ. Աջոյն՝

Ի դիմաց
Հ.Ա.Ե. Կեդրոնական Վարչութեան

Փոխ-Ա.պետ — Ա.դպիր
Ա. Արսլանեան — Զ. Անմահունի

Պուէնոս Այրէս, 5 Յուլիս 1989

Այսու կը ծանուցանենք մեր խորին շնորհակալութիւնները անոնց որոնք ներկայ գտնուեցան մեր սիրելի եւ անբաժան հայրիկին եւ գաղութիս 85 տարուան Հոգեւոր Հովիւ Տ. Նորայր Ա. Քհնյ. Տէր Խորէնեանին մահուան առթիւ, նոյնպէս շնորհակալութիւն Հայոց Առաքելական Եկեղեցւոյ իր հոգեւոր եղբայրներուն, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Գրիգորիս Եպս. Բունիաթեանի Առաջնորդ՝ Արխենթինահայոց, որոնք մատուցեցին հանդիսաւոր Սուրբ Պատարագ իր յիշատակին:

Այրի Երեցուհի Ռոսա
Զաւակները, Հիլտա, Քնարիկ
եւ Լեւոն Մալճեան եւ Թոռները

Հ.Ը.Ը. Միութեան Նախագահ՝ Տիար Ալեք Մանուկեան 125,000 տոլարի յատկացումով կը նշէ 25-ամեակը Գաբրիէլ Ինճեճիկեանի կրթական վաստակին



Հ.Ը.Ը.Մ.ի ծկեանս Նախագահ Տիար Ալեք Մանուկեան

Ներկայ տարուան ընթացքին իր քառորդ դարը բոլորեց հայ ամենօրեայ վարժարանի շարժումը Հիւսիսային Ամերիկայի մէջ: Արդարեւ, 25 տարիներ առաջ նուիրեալ կրթական մշակ մը՝ յանձին Գաբրիէլ Ինճեճիկեանի նախաձեռնեց միջ այդ ազնիւարին դրուող ծրագիր մը, հաստատելով առաջին ամենօրեայ վարժարանը Գալիֆորնիոյ մէջ: Շարժումը հետզհետէ ծաւալ ստացաւ եւ այսօր աւելի քան տասնըհինգ հայկական ամենօրեայ վարժարաններ կը գործեն Հիւսիսային Ամերիկայի մէջ, դառնալով մէկ կենսական ազդակը գաղութի ազգապահպանման գործին:

Վերջերս, յատուկ հանդիսութեամբ նշուեցաւ Պր. Ինճեճիկեանի պատմական նախաձեռնութեան 25-ամեակը, իր հաստատած ու ղեկավարած Գերահեան վարժարանի Շրջանաւարտից Միութեան կողմէ:

Սակայն, անկատի ունենալով համազգային տարողութիւնը յիշեալ կրթական մշակին սկսած գործին՝ Հ.Ը.Ը. Միութեան ցեկեան Նախագահը Տիար Ալեք Մանուկեան 100,000 տոլարի նուիրատուութեամբ մը Բարեգործականի մօտ հաստատեց «Գաբրիէլ Ինճեճիկեան» հիմնադրամը, որուն եկամուտներէն ամէն տարի երեք կրթաթոշակ պիտի յատկացուի համալսարանական երեք հայ ուսանողներու կամ երկրորդական վարժարանի աշակերտներու:

Նոյնպէս, Նախագահին բաղձանքով յառաջիկայ աշնան Հ.Ը.Ը. Միութեան Գալիֆորնիոյ շրջանակը յարգանքի յատուկ հանդիսութիւն մը պիտի կազմակերպէ Լոս Անճելըսի մէջ, վաստակաւոր դաստիարակին եւ իր տիկնոջ յանձնելու Պր. Մանուկեանի անձնական գնահատանքը կատար դաստիարակին եւ իր տիկնոջ յանձնելու Պր. Մանուկեանի անձնական գնահատանքը խորհրդանշող 25,000 տոլարի նուէրը:

Պր. Ինճեճիկեանի ուղղեալ գնահատագրի մը մէջ Նախագահը յատկապէս կը նշէ.- «Անցած կը յիշենք Ձեր աչքերէն ճառագայթող հաւատքի խորունկ բոցը, երբ 25 տարիներ առաջ հասաք Ամերիկա. կրկնապէս յուզիչ էր այդ պահը, որովհետեւ հազարաւորներ կը հասնէին այդ օրերուն - ու դեռ կը շարունակեն հասնիլ ցայսօր - Ամերիկա, բարելաւելու համար իրենց սեփական կեանքին պարմանները: Բայց Դուք կը հասնէիք՝ բան մը փոխելու ամերիկահայ կեանքին մէջ. փորձելու՝ չփորձուածը: ... Այնուհետեւ ծաւալ եւ տարածութիւն ստացաւ հայ կրթական գործը, որուն բարերար արգասիքը սկսած է վայելել Ամերիկահայ գաղութը:»

Թ.Մ.Մ.ի եւ ՍԱՐՏԱՐԱՊԱՏ Նոր կեդրոնի հիմնարկէքը

Յառաջիկայ կիրակի ... գուստոսին, ժամը 12 ... Արմենիա Փողոց թիւ ... վրայ, տեղի պիտի ունենայ հիմնարկէքի արարողութիւնը, Հ.Ը.Ը. Միութեան ... րոնական Վարչութեան ... առենապետ բարերար ... րէն Ֆէսճեանի անուան ... քէեան Մշակութային Միութեան, ինչպէս նաեւ ... ՍԱՐԱԳԱՏ»ի արդիական տպարանի նոր կեդրոնին:

Կը հրաւիրենք բոլոր ... ազգայիններ ներկայ գտնուելու արարողութեան:

ՍԱՐՏԱՐԱՊԱՏ

Խորէնեան Պատարագի հեղինակը մեր մէջ

Հ.Ը.Ը. Միութեան հրաւէրով Հայաստանէն 20 Յուլիսի օր ֆաղաքս ժամանեց Ս. Էջմիածին Մայր Տաճարի երգչախումբի ղեկավար-երաժշտագէտ Պր. Խորէն Մեխանեճեանը, որ միեւնոյն ատեն Խորէնեան Ֆառաջայն պատարագի հեղինակն է:

Ծարգելի հիւրը 24 Յուլիսի Երկուշաբթի օր մամլոյ ասուլիս ունեցաւ, որուն ներկայ եղան թերթերու եւ ռատիոհաղորդումներու խմբագիրները, տնօրէնները եւ ներկայացուցիչները:

Հ.Ը.Ը. Միութեան Ֆարտուղար Պր. Տիգրան Գահվեջեան բացման խօսքով հանգամանօրէն ներկայացուց հայրենի արուեստագէտը, իր երաժշտական ընդարձակ գործունէութեանը մէջ, ապա խօսքը տուաւ Պր. Մեխանեճեանին, որ հայրենի արական սեռին յատուկ կուռ ձայնովը իր ուրախութիւնը յայտնեց եւ հայրենի ժողովուրդին եւ Վեհափառ Հօր բարեւները հաղորդեց, շնորհակալութիւն յայտնեց Հ.Ը.Ը. Միութեան ցուցաբերած ասպնջականութեան, ապա յայտնեց թէ իւր պատրաստ է պատասխանելու ներկաներու հարցումներուն:

Այս առթիւ առաջին հարցումը եղաւ, -որ նաեւ գրեթէ վերջինը եղաւ, ժամանակին սուղ ըլլալուն եւ հարցման պատճառած շահեկանութեան պատճառով- Սարտարապատի խմբագիր Ընկ. Նորայր Ֆարատանեանի կողմէ, որ հետեւեալ էր.- «Մեզի ծանօթ են դասական պատարագներէն Եկմալեան եւ Կոմիտասեանները: Դուք Խորէնեան պատարագով ինչ նորութիւն բերիք:

Երգահան-խմբավարը, ժպիտով դիմադրեց հարցումը եւ անսեթեւեթ արտայայտութեամբ մը յայտնեց թէ իւր երբեք մտադիր չէր եղած պատարագի մը երաժշտական պատրաստութեան, որքան ատեն ատիկա դժուարին եւ պատասխանատու աշխատանք մը պիտի ըլլար համեմատած նշուած պատարագներու կարգին: Իր անկեղծ խօսքերուն ընդմէջէն նշմարուող համեստութիւնով շարունակեց.

- Խորէնեան պատարագը դաշնաւորեցի պատահականօրէն: Եւ, սա եղաւ ուղղակի Վեհափառ Հօր պնդումով, պարագաներու բերմամբ: Վեհափառ Հօր ազտեցութիւնը մեծ եղած է իմ կեանքի եւ հոգեւոր երաժշտութեան բնագաւառի մէջ: Պատարագի մեներգներու բաժնին մէջ գտնուող (միայն...) պարբերութեան երկարաձգումը, որ կերպով մը կը ծանծաղեցնէր պատարագին ընթացքը, եղաւ մեկնակէտ, որ Վեհափառ Հայրը իմն պաշտօն տայ, որպէս խմբավար-երգահան, սրբագրութեան երթարկել եւ աւելի տիմամիք բնոյթ տալ անոր:

Այդ պարբերութիւնը, ապա նաեւ ուրիշ կարգ մը սրբագրութիւններու թելադրութիւնը՝ Վեհափառ Հօր կողմէ, վերածուեցաւ նոր պատարագի մը ստեղծման, որուն ամբողջական լրումը կարօտեցաւ մօտ երեք տարիի: 1980-1983.- Ապա, Վեհափառ Հայրը իր սրբատառ կռնդակներով վաւերացուց պատարագը, որպէս խմբերգի բաժին, սփիւռքի համար եւս:

Այս առթիւ Պր. Խորէն Մեխանեճեան խիստ շահեկան մօտեցումով, բնագրկութեան ենթարկեց դաշնաւորման ժամանակ անհրաժեշտ նկատուած մանրամասնութիւններ, անոնց հոգեբանական կառոյցը ցայտեցնելով: Այսպէս, ըսաւ ան, պատարագին նախ՝ գրաւոր մասի բովանդակութիւնը հարկ է ընդունիլ որպէս թելադրական միջոց, ուր կայ աղաչական, սպասողական, հրամայական, փառաբանական եւլն. ապրումներ, որոնց համապատասխանելու է երաժշտական բաժինը: Երկրորդ մտասեւեռումս եղած է, շարունակեց, շեշտաւորել բառերուն աւարտները, քանի որ հայ լեզուի մէջ կանոն է որ շեշտը բառի մը վերջին վանկին վրայ:

Կրկին՝ Սարտարապատի կողմէ ուղղուած. «-Բացի պատարագէ կամ հոգեւոր երաժշտութենէ յօրինո՞ծ էք ժողովրդային երգեր եւս» հարցումին յարգելի երաժշտագէտը յայտնեց թէ իր երաժշտական բնագաւառը եղած է հոգեւորականը:

Ընդունելութիւն

Ասուլիսի աւարտին Պր. Խորէն Մեխանեճեանը առաջնորդուեցաւ ընդունելութեան սրահ, ու ֆաղաքիս ծանօթ արուեստագէտներ, -երգահան, բանաստեղծ, նկարիչ- միութիւններու ներկայացուցիչներ, ազգայիններ, մօտ հարիւր հոգի գինիք դիմաւորեցին, լուսի սեղանի մը շուրջ: Այս առթիւ, Պր. Վահան Գալֆաեան ստանձնեց պարտականութիւնը յարգելի երգահանը ներկաներուն ծանօթացնելու պաշտօնը, որմէ յետոյ տըրտնջացաւ իրեն:

Պր. Խ. Մեխանեճեան իբրեւ հանդիսման պատշաճ խօսակցութենէ յետոյ, անդրադարձաւ նաեւ բովանդակ հայութեան համար կենսական երկու հարցերու. Արցախ եւ երկրաշարժի աղետին:

- Մենք այժմ, Արցախի հարցի լուծումը թողած ենք դիւանագիտական յարաբերութիւններու: Խ. Միութեան Կեդրոնական Կառավարութիւնը արդէն իսկ կը զբաղի այդ հարցով, որ ժամանակի կը կարօտի, ուրիշ կնճռոտ հարցերու եւս ընդառկութեան ենթարկուելու հետեւանքով: Այս հարցին լուծման դերակատարները կը հանդիսանայ ծոյնիսկ հայրենի ժողովուրդը, եւ ա՛ն պիտի ըլլայ ի վերջոյ տերը իր պահանջին:- Իսկ ինչ որ կը վերաբերի սփիւռքին, անոր միութեան մէջ, պիտի ըլլայ ուժը, որ ... ճշմանակէ բռունցքուի ... րեհիի շուրջ փոխանակ ... ջատողական տրամաբանութիւն կրնալու:

Մեզ բոլորիս համար այսօր կայ երառայ եւ իրական ... մայական ուրիշ խնդիր ... որը ծանրակշիռ հանգամանք կը ներկայացնէ: Երկրաշարժի աղետը մեր արձանագրած 500.000 հոգի անմահացած է: Սա հսկայ պատանէ կը պահանջէ, ... միայն շինութիւններու ... տապ պատրաստութեան ... այլ մանաւանդ ժողովրդային հոգեկանը փրկելու տեսակէտ կիւնէ դիտած: Ընկերային կրկանքը, հարազատներու կորուստը, երդիհի պակասը, ահաւոր ընկճում յառաջացուցած է արտահարթներու մօտ, որոնց միջեւ՝ մանկական գամբնդմիշտ այդ հաղորդակցութեան հեռանալու վտանգը տրամադրութիւն ունեցողներ կան: Սա, մեզ համար ... շադրութեան արժանի մեծ գոյն հարցն է, որուն համար գիտենք թէ սփիւռքի կարելին ըրած է եւ վստահ ենք որ պիտի շարունակէ ընել:

Խիստ հաղորդական մթնոլորդի մը մէջ, ներկայացուցիչները մտերիմ զրոյց ունեցան խմբավարին հետ, ... կապէս անկեղծ եւ սրտաբուխ երգահան-խմբավար Խորէն Մեխանեճեանին հետ:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՐՏԱՐԱԲԱՏ
SARDARABAD

Suplemento Olimpíada Mundial Juvenil

MIERCOLES 9 DE AGOSTO DE 1989

ACONTECIMIENTO MUNDIAL DE LA JUVENTUD ARMENIA

12ª Olimpiada Mundial Navasartian

Liga de Jóvenes de U.G.A.B.

INAUGURACION OFICIAL

Estadio OBRAS SANITARIAS

Av. Libertador 7395 - Capital

Jueves 17 de Agosto - 21,30 Horas

Participan:

- **Banda Oficial de la Fuerza Aérea Argentina**
- **Alumnos del Instituto Educativo "Marie Manoogian"**
- **Coro "Shnorhalí"**

Parada y Desfile:

- **Delegaciones de Deportistas**
- **Agrupación Scout General Antranik (U.G.A.B.)**

Auspician:

- **Ministerio de Acción Social de la Nación**
- **Municipalidad de la Ciudad de Buenos Aires**
- **Secretaría de Deportes y Recreación Social**
- **Secretaría de Turismo**
- **Comité Olímpico Internacional**

DECLARADO DE INTERES MUNICIPAL POR EL HONORABLE CONCEJO DELIBERANTE DE LA CIUDAD DE BUENOS AIRES

Con la Presencia del Señor Intendente Lic. Carlos Grosso

CITA DE HONOR PARA TODA LA COLECTIVIDAD

Համաշխարհային Հանդիպում Հայ Երիտասարդութեան

Հ.Բ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑԻ ՄԻՋ-ՅԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ 12րդ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

Պաշտօնական Բացում

Օպրաս Սանիթարիասի Մարզադաշտին մէջ

Լիպերթատոր 7895 - Մայրաքաղաք

Հինգշաբթի 17 Օգոստոս, Ժամը 21,30-ին

Մասնակցութեամբ՝

- Արժանթինի Օդուժի Նուագախումբին
- Մարի Մանուկեան Կրթ. Հաստատութեան Աշակերտներուն
- «Շնորհալի» Երգչախումբին

Տողանցք

- Մարզական պատուիրակներու
- Հ.Բ.Ը.Մ.Ի Անդրանիկ Սկաուտական Խումբին

Հովանաւորութեամբ՝

- Ընկերային Բարեկարգութեանց Նախարարութեան
- Պուէնոս Այրէսի Քաղաքապետութեան
- Մարզանքի եւ Ընկերային գործունէութեանց քարտուղարութեան
- Զբօսաշրջիկային Քարտուղարութեան
- Համաշխարհային Ոլիմպիականի Կոմիտէի

ՎԱՀԵՐԱԳՈՒՅԱ ԻԲՐԵՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՁԵՌՆԱՐԿ՝ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՅԱՐԳԱՐԺԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻԷ ԿՈՂՄԷ

Ներկայութեամբ՝ Պուէնոս Այրէսի Քաղաքապետի Լիսենսիատօ Կառլոս Կրոսսոյի

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ԲՈՎԱՆԴԱԿ ԳԱՂՈՒԹԻՍ

Liga de Jóvenes de la U.G.A.B.

Convocados por el presidente de la Unión General Armenia de Beneficencia de la filial local de entonces, Parunak Sandaldjian -inspirado en la trascendencia especial y temporal de Parekordzagán fundada por Boghos Nubarsupo transmitir a catorce jóvenes armenios los ideales sustentados en principios y propósitos consignados en el Acta de Fundación de esta benemérita sociedad.

Receptado, interpretado y aceptado el mensaje de proyección dirigido por el Sr. Sandaldjian, este grupo inicial fue considerado fundador de la Liga de Jóvenes de la U.G.A.B. de Buenos Aires, el 21 de noviembre de 1940.

